ԿԱՅՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Սույն Օգտագործման պայմանները կարգավորում են docx.am հարթակի (այսուհետ՝ «Հարթակ») և օգտատիրոջ միջև հարաբերությունները: Հարթակի սեփականատերն է «ԴՈԿԻՔՍ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն): Հարթակը ապահովում է հնարավորություն իրավական փաստաթղթերի ավտոմատ կազմման և կառավարման համար:

Գրանցվելով կամ օգտագործելով Հարթակը՝ օգտատերը հաստատում է, որ ծանոթ է սույն Պայմաններին և համաձայն է դրանց:

1. **Գրանցում և օգտատիրոջ հաշիվ**

Օգտատերը գրանցվում է էլեկտրոնային փոստի միջոցով: Հարթակում դիմումներ, բողոքներ և այլ փաստաթղթեր կազմելու համար օգտատերը պարտավոր է լրացնել իր անձնագրային տվյալները, հասցեները, հեռախոսահամարը և անունը, ազգանունը, հայրանունը: Օգտատերը կարող է կցել նաև անձնագրի սքանավորված տարբերակը և այլ փաստաթղթեր: Այս տվյալները օգտագործվում են փաստաթղթերի ձևավորման և նույնականացման նպատակով, իսկ կցված փաստաթղթերը պահպանվում են օգտատիրոջ անձնական հաշվում, որոնք վերջինս կարող է ջնջել ցանկացած պահի: Այն կցված փաստաթղթերը, որոնք կցված են որևէ ձևանմուշի, չեն կարող հեռացվել կամ ջնջվել, քանի դեռ չի ջնջվել ձևանմուշը, որին կցված են այդ փաստաթղթերը: Օգտատիրոջ վերաբերյալ որևէ տվյալ չի կարող տրամադրվել այլ անձի կամ կազմակերպության անաց վերջինիս համաձայնության:

2. **Հարթակի գործառույթ.**

Հարթակը հնարավորություն է տալիս օգտատիրոջը ընտրել իրավական խնդրի տեսակ, նշել համապատասխան փաստական հանգամանքները և ստանալ իր կատարած նշումների և լրացված տվյալների հիման վրա ավտոմատ կազմված փաստաթուղթ (բողոք, դատական հայց և այլն): Կայքը կարող է ինքնաշխատ փաստաթղթում ներառել իրավական նորմեր, հոդվածներ, հոդվածների կետեր, պարբերություններ և վերլուծություններ, սակայն վերջնական ձևավորված փաստաթղթի բովանդակության համար պատասխանատվությունը կրում է օգտատերը: Օգտատերը հնարավրություն է ստանում տեսնել վերջնական արդյունքում ձևավորած փաստաթուղթը և միայն այն ստորագրելուց հետո է ստանում հնարավորություն այն ուղարկել տվյալ ձևանմուշի համար կայքի կողմից նախատեսված հասցեատիրոջը, որը ևս տեսանելի է օգտատիրոջ համար: Որպես փաստաթղթի ուղարկման հավաստում օգտատերն իր էլեկտրոնային փոստին ստանում է տվյալ հասցեատիրոջն ուղարկված փաստաթղթի և կից փաստաթղթերի պատճենը (cc):

3. **Պատասխանատվության սահմանափակում.**

Ընկերությունը չի կրում պատասխանատվություն փաստաթղթերի բովանդակության, դրանց ճիշտ լինելու կամ հասցեատիրոջ արձագանքի համար: Համակարգը գործում է ավտոմատացված սկզբունքով՝ ըստ օգտատիրոջ մուտքագրած տվյալների:

4. **Անվտանգություն.**

Օգտատերը պարտավոր է իր օգտանունը և գաղտնաբառը գաղտնի պահել և չտրամադրել երրորդ անձանց: Անձնագրի սքանի պահպանումը կամ հեռացումը կատարվում է օգտատիրոջ հայեցողությամբ:

5. **Հարթակի տեխնիկական սահմանափակումները.**

Հարթակում կարող են լինել տեխնիկական որոշակի սահմանափակումներ, որոնք կարող են վերաբերել տվյալների մուտքագրման լեզվի, ֆորմատի, ձևաչափի և այլ պայմաններին, որոնք հարթակի կողմից նախատեսված են և հետագայում կարող են նախատեսվել: Օգտատերն օգտագործելով հարթակն ընդունում է, որ համաձայն է տվյալների լրացման կայքում նախատեսված ձևաչափին և մյուս պայմաններին:

6. **Փաստաթղթերի առաքում.**

Կայքում օգտատիրոջ կողմից մուտքագրված տվյալների հիման վրա կազմված փաստաթղթի՝ օգտատիրոջ կողմից ստորագրելուց հետո այն կարող է օգտատերն ուղարկել այդ ձևանմուշում նշված հասցեատիրոջը՝ էլեկտրոնային փոստի միջոցով:
Հասցեատիրոջն ուղարկելու դեպքում պատճենն ուղարկվում է օգտատիրոջը՝ կայքում գրանցվելու ժամանակ օգտատիրոջ կողմից նշված էլեկտրոնային հասցեին: Եթե օգտատերն իր էլեկտրոնային հասցեին չի ստացել պատճենը, այնուամենայնիվ, կայքը պատասխանատվություն չի կրում հասցեատիրոջն ուղարկված լինելու վերաբերյալ ապացույց ներկայացնելու կամ ապացուցման հնարավոր գործընթացներում:
Օգտատերը կարող է արդեն իսկ հասցեատիրոջն ուղարկված փաստաթղթերն ուղարկել այլ որևէ էլեկտրոնային հասցեի, որի դեպքում ևս պատճենը ստանում է իր էլեկտրոնային հասցեին: Օգտատերը տեղեկացված է և գիտակցում է, որ կայքում իր կողմից կազմված փաստաթղթերը որևէ եղանակով ուղարկելու ժամանակ այդ փաստաթղթին կցված փաստաթղթերը ևս ուղարկվում են այդ փաստաթղթի հետ միասին:

7. **Ստորագրություն.**

Կայքում օգտատերն ունի հնարավորություն վերջնական ձևավորված փաստաթուղթը ստորագրել համակարգչի, թաբլեթի, բջջային հեռախոսի կամ որևէ այլ սարքի էկրանին բացված դաշտում իր ստորագրությունը նկարելու միջոցով, որը պահպանվում է կայքի տվյալների բազզայում՝ կցված տվայլ օգտատիրոջ անձնական հաշվին: Օգտատերը միայն առաջին փաստաթուղթը ստորագրելու ժամանակ է նկարում իր ստորագրությունը, իսկ երկրորդ և հաջորդ փաստաթղթերի դեպքում օգտատիրոջ կողմից ստորագրել կոճակը սեղմելու պարագայում տվյալ փաստաթղթի վրա ավտոմատ՝ փաստաթղթի՝ ստորագրության

համար սահմանված հատվածում կայքի կողմից տեղադրվում է օգտատիրոջ անձնական հաշվին կցված ստորագրությունը, որը տեսանելի է օգտատիրոջ համար: Եթե օգտատերը ցանկանում է փոփոխել իր ստորագրությունը, ապա պետք է կայքի աջակցման մեյլին իր՝ կայքում գրանցված էլեկտրոնային հասցեից ուղարկի համապատասխան նամակ՝ իր անձնական հաշվին կցված ստորագրությունը հեռացնելու վերաբերյալ, որի դեպքում օգտատերը նոր փաստաթուղթ կազմելու ժամանակ կունենա հնարավորություն նոր ստորագրություն ստղծելու համար:

8. Անձնական տվյալների պաշտպանություն և մշակում.

Հարթակում օգտատիրոջ անձնական տվյալները մշակվում են «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով: Անձնական տվյալների մշակման, պահպանման և արխիվացման գործընթացներն իրականացվում են ՀՀ օրենսդրական ակտերի և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի հիման վրա: Օգտատիրոջ անձնագրային տվյալները, էլեկտրոնային հասցեն և հեռախոսահամարը պահպանվում են գաղտնագրված տարբերակով:
Տվյալների հավաքագրումը կարող է իրականացվել հարթակի վիճակագրությունն արտացոլելու, հարթակի աշխատանքը և սպասարկման որակը բարելավելու, հնարավոր տեխնիկական խնդիրների բացահայտման և լուծման նպատակներով:

9. Օգտատիրոջ օգտահաշվի ջնջում.

Եթե օգտատերը ցանկանում է կայքից հեռացնել և/կամ ջնջել իր օգտահաշիվը պետք է կայքի աջակցման էլեկտրոնային հասցեին ուղարկի համապատասխան նամակ՝ իր օգտահաշիվը ջնջելու վերաբերյալ:
Օգտատիրոջ դիմումի հիման վրա օգտահաշիվը ջնջվելու դեպքում կայքից միաժամանակ ջնջվում են բոլոր ֆայլերը, փաստաթղթերը, ստորագրությունը և բոլոր այլ տվյալները, որոնք ստեղծվել են այդ օգտատիրոջ կողմից:

10. Փոփոխություններ.

Ընկերությունն իրավունք ունի փոփոխել սույն Պայմանները՝ հրապարակելով նոր տարբերակը Կայքում: